ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

19 օգոստոսի. Շամախու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինոդը խնդրեց Կառավարիչ Սենատից, որ նոյն կոնսիստորիայի կարգապահ գուբերնսկի սեկրետար Յովսէփ-բէկ Սերգեյեանին տրուի կօլեժսկի սեկրետարի աստիճան։

19 օգոստոսի. Սինոդը արժան տեսաւ Հաղարծնու վանքի վանահայր Պօղոս վարդապետ Տէր Մարգարեանցին կարգել Գանձակի վիճակի առաջնորդական փոխանորդ՝ թողնելով նորա վերայ նաև նոյն վանքի վանահայրութեան պաշտօնը։

19 օգոստոսի. Սինոդը յանձնեց տնտեսական մասի գործավար Պ. Աւետիս Տէր Գաբրիէլեանցին, որ նօտարական կարգով մի կարողագիր (довѣренность) հաստատէ Միքայէլ Պապաջանեանցի անունով Քեօթակլու կալուածի դատը պաշտպանելու համար։

26 օգոստոսի. Տփխիսի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ Սինոդը հրամայեց ընդունել Ռէվազլու գիւղացի Յակոբ Խեմչեանցին հոգևորականութեան մէջ և կարգել սպասաւոր նոյն գիւղի եկեղեցում։

26 օգոստոսի. Նոյն Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ՝ Սինոդը խնդրեց Կովկասի քաղաքական մասի պ. Կառա-

վարչապետից Հրէուհի Մարիամ Բարսկայեանին թոյլ տալ Հայոց եկեղեցու ծոցը մտնելու։

—

26 օգոստոսի. Երևանի Հայոց կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ՝ Սինոդը պատուիրեց որ Գէյրլեցի Առաքել Առաքելեանցը ընդունուի հոգևորականութեան մէջ և կարգուի սպասաւոր նոյն գիւղի եկեղեցում։

—

26 օգոստոսի. Սինոդը մերժեց Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը Թէյրլեցի Կարապետ Աղիզեանցին ջահընկալութեան աստիճան տալը, այլ պատուիրեց միայն ընդունել նորան հոգևորականութեան մէջ նոյն եկեղեցում սպասաւորելու համար։

—

26 Օգոստոսի. Սինոդը մերժեց Տփխիսի կոնսիստորիայի միջնորդութիւնը Վանաց աւագ եկեղեցու պարսպի դիմաց գտնուող դատարկ գետնի վերայ շինութիւն անելու համար։

—

26 օգոստ. Տփխիսի կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ՝ Սինոդը տեսնելով, որ հաւատարմատար պ. Արծրունին չունէր իրաւունք 273 ռուբլի վերցնել իւր օգտին Մայր Աթոռի Երևանեան փողոցի վերայ գտնուած ման վարձակալից ստացած փողերից Ախալքալակի եկեղեցւոյ շինութեան գործի դատաստանական ծախսի փոխարէն, պատուիրեց կոնսիստորիային փութով ուղարկել այդ փողերը Սինոդ պ. Արծրունու ռոճկից, բաւականութիւն տալով նորան ումից որ հարկաւոր է։

—

26 օգոստ. Վանական կառավարութեան յայտարարութեան համեմատ՝ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի Գանձապահին, որ Վանքի միաբանից սենեակների շինութեան համար մի հազար ռուբլի տայ նոյն կառավարութեան, որ անցեալ ապրիլ, մայիս, յունիս, յուլիս ամիսների ընթացքում ստացած 15000 ռուբլու հետ կանէ 16000 ռուբլի։

—

26 օգոստ. Նոյն կառավարութեան յայտարարութեան համեմատ՝ Սինոդը պատուիրեց Մայր Աթոռի Գանձապահին ճեմարանի ու Մայր Աթոռի ծախսերի համար վեց հազար ռուբլի տալ նոյն կառավարութեան, որ անցեալ եօթն ամիսների ընթացքում ստացած 58000 ռուբլու հետ կանէ 64,000 ռուբլի։

—

4 սեպտեմբերի. Սինոդը յանձնեց բարեշնորհ Ներսէս վարդապետին չափել տալու աթոռապատկան Օշական գիւղի նորատունկ այգիները ընդհանուր ցուցակի մէջ ձգելու և յօգուտ Աթոռոյ որոշեալ հարկը պահանջելու համար. նոյնպէս նորին բարեշնորհութեան միջոցաւ զգուշացրեց այգեպէրերին այգիների մէջ չսերմանել ցորեան, գարի և բամբակ. հակառակ դէպքում կպահանջուի նոցանից ոչ թէ սահմանած այգեհարկն, այլ այդպիսի բերքերից հասն (բահրայ)։

—

4 սեպտեմբերի. Սինոդը պատուիրեց Խորվիրապի վանահայր Անտոն վարդապետ Վարդազարեանցին վանուց արդիւնքով նորոգել պարսպի փլուած պատերը, սկսելով այն տեղից, որ կից է վիրապին, իսկ աւարտելուց յետոյ ծախուց համառօտ հաշիւը քաղելով վանուց եկեմտից տումարից, ներկայացնել Սինոդին։

—

4 սեպտեմբերի. Երևանայ նահանգապետի յուլիս 7 № 2582 գրութեան համաձայն թոյլ է տրւում Աշտարակեցի Յովհաննէս փարուանեանցին մտնելու հոգևոր տեսչութեան մէջ։ Սինոդը պատուիրեց Երևանայ Կոնսիստորիային յիշեալ Յովհաննէս փարուանեանցին ընդունել հոգևորականութեան մէջ, կարգելով նոյն գիւղի եկեղեցւոյն ոպասաւոր։

—

4 սեպտեմբերի. Սինոդի անդամ բարեշնորհ Վահան վարդապետ Տէր Գրիգորեանց Սինոդի տնօրէնութեամբ ծառայութեան գործով գնացել էր Նուխի քաղաք, և այժմ վերադարձից յետոյ

Յ. Էջմիածին, Սինոդը հրաւիրեց Նորին բարեշնորհութիւնը վարել ըստ առաջնոյն Սինոդի անդամութեան պաշտօնը։

—

4 սեպտեմբերի. Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Գառնակերեանցը արձակուած լինելով Երևանի թեմական փոխանորդութեան պաշտօնից, Սինոդը՝ կարգեց թեմական փոխանորդ Ս. Էջմիածնի միաբան բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Սրապեանին։

—

4 Սեպտեմ. Ատրպատականի Առաջնորդ Ստեփաննոս Մխիթարեան Եպիսկոպոսի մահուան պատճառաւ Սինոդը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի միաբան բարեշնորհ Խաչատուր վարդապետ Կարապետեանցին կարգեց առժամանակեայ կառավարիչ Ատրպատականի թեմին։

—

4 սեպտեմ. Կեչառուայ վանքի վանահայր բարեշնորհ Մկրտիչ վարդապետ Տէր Թադէոսեանց 1891 թուին հոկտեմբեր ամսին դիմումէ յայտարարութեամբ Սինոդին նշանակելու իրան Դարալագեազու Սուրբ Խաչ վանքին վանահայր ինչ ինչ պայմաններով։ Սինոդը յիշեալ վարդապետի յայտարարութիւնն թողեց առանց հետևանքի։

—

4 սեպտեմ. Թալիշ գիւղի բնակիչները իւրեանց քահանայի հետ 1888 թուին բողոքումեն իւրեանց եկեղեցւոյ սեղանակապութեան համար։ Այդ թուղթը նոյն թուին փետր. 6. 511 թ. մակագրութեամբ յանձնուում է թեմական ատենի քննութեան, և հաստատուումէ վկայութեամբ թէ եկեղեցական զարդերը գողացել է Միսակ Մանուկեանը, որի տանը իսկ գտնումեն գողացած զարդերը։ Կոնսիստորիան քրէական դատավարութեան 1011 յօդ. օրէնքի զօրութեամբ յանձնումէ նահանգական դատարանի տնօրէնութեան։ Որովհետև քննութիւնը յանձնուած է մարմնաւոր դատարանին՝ Սինոդը կարճեց այդ գործը։

—

7 սեպտեմ. Սինոդը հրամայեց Խալխուեցի Խաչատուր Շահպազեանցի հոգևորականութեան մէջ մնալու գործը կարճել, նորա համընակիցների իւրեան հարկատուութիւնից չարձակելու պատճառաւ, և յայտնել նորան Երևանի կոնսիստորիայի միջոցաւ։

—

9 սեպտեմ. Վրաստանի և Իմերէթի Հայոց կոնսիստորիայի սոյն տարուայ յունիսի 22 թիւ 2155 յայտարարութեան համաձայն Սինոդը լուծումն տուեց շինելու Տփխիսի Հրեշտակապետաց եկեղեցւոյ գաւթում չորս սենեակներ և մի կրպակ, դարձնելով նոյն կոնսիստորիային առաջարկուած ծրագիրը, նախահաշիւն և պայմանը։

—

9 սեպտեմ. Ս. Էջմիածնի վանական կառավարութեան 125 թ. սեպտեմ. 4 յայտարարութեան համաձայն Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ Մայր Աթոռի, Ճեմարանի և Տպարանի ծախուց համար յընթացս սեպտ. ամսի 10000 րուբլի, որը ութը ամսուայ ընթացքում 64000 րուբլի ստացած գումարի հետ կանէ 74000 րուբլի։

—

9 սեպտեմ. Վանական կառավարութեան 126 թ. սեպտ. 4 յայտարարութեան համաձայն Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ 5000 րուբլի միաբանաց սենեակների շինութեան համար. որը անցեալ Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսների ընթացքում ստացած 16000 րուբլու հետ կանէ 21000 ր.

—

9 սեպտ. Իգդիրցի Մկրտիչ կանայեանց իւր խնդրի հետ ներկայացնելով Սինոդին մի կալուածագիր տիրապետութեան թըղթերով հանդերձ, խնդրում է նորա մէջ յիշուած երկու աչք ջրաղացն երկու կողմի անտառի հետ ընդունել իբրև նուէր իւրեանց գիւղի Ս. Սահակ եկեղեցւոյն ի յիշատակ իւր հանգուցեալ եղբայր Աղախան կանայեանցի, որպիսի ջրաղացն բերում է տարեկան 300 րուբլի արդիւնք։ Սինոդը ուղարկելով կանայեանցի խնդիրը և կալուածագիրը օտար դաւանութեանց հո[illegible]որ

գործերի դիվարտամենտին, խնդրում է ըստ զօրութեան քաղաքական օրինաց 1011 և 1012 յօդ. VIII հատ. Ա. մասին, թոյլատուութիւն Ս. Սահակ եկեղեցւոյ տեսչութեան ներքոյ ընդունելու համար նուիրողի անշարժ կալուածքը։

—

9 սեպտ. Աստրախանի կոնսիստորիայի 1184 թ, սոյն տարուայ յունիսի 12 յայտարարութեան համաձայն Սինոդը լուծումն տուեց կառուցանելու քաղաքի Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցու ժամակոչների և պահապանների ընակութեան համար տուն ծախսելով նոյն եկեղեցու արդիւնքից 7014 ռուբլի, դարձնելով նոյն կոնսիստորիային համախոսագիրը, ծրագիրն և նախահաշիւն։

—

9 սեպտ. Տփխիսի կոնսիստորիայն անցեալ տարուայ նոյեմբեր 18-ի 3985 յայտարարութեան հետ ներկայացնելով Սինոդին Օգրոպակերտցի Թադէոս Մարուքեանցի ծննդական և հարկից արձակման վկայականները և հարցաքննական թերթերը Սաթլել գիւղի ժողովրդեան և Օգրոպակերտի քահանայի խնդիրը, խընդրում է ընդունել հոգևորականութեան մէջ և ձեռնադրել քահանայ Սաթլել գիւղի ժողովուրդը հովուելու և Օգրոպակերտի 87-ամեայ ծերունի քահանայի օգնականութեան համար։ Սինոդը հասու լինելով յիշեալ Թադէոս Մարուքեանցի քահանայութեան արժանաւոր լինելուն՝ յանձնեց Գեր. Յովհաննէս եպիսկոպոս Տէր-Յարութիւնեանցին ձեռնադրել քահանայ իսկ ձեռնադրութեան վկայականը մատուցանել Սինոդին ի հաստատութիւն, որի համար տեղեկութիւն տալով Տփխիսի հայոց կոնսիստորիային դարձրեց ծննդական վկայականները քահանայացուին։

—

9 Սեպտ. Երևանի կոնսիստորիան սոյն տարուայ փետր. 22-ից 486 թ. յայտարարութեան հետ մատուցանելով Սինոդին ներքին Խաթուն-արխցի վաղարշակ Տէր-Յովհաննիսեանցի համախոսական հարցաքննական թղթերը, խնդրել էր ձեռնադրել քահանայ։ Սինոդը մերժեց Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը յի-

շեալ Վ. աղարշակ Տէր Յովհաննիսեանի թերուսումն լինելու պատճառաւ։

—

9 սեպտ. Սինոդի ապրելի 8-ից 1891 ամի 1302 թ. գրութեան համաձայն Երևանի Նահանգապետը յունիս 30-ից 2454 գրութեամբ արձակեց հարկատուութիւնից Նախիջևանցի Յովհաննէս Բունիաթեանցին։ Սինոդը հրամայեց Երևանի կոնսիստորիային ընդունել նորան հոգևորականութեան մէջ և կարգել տեղւոյն ս. Գէորգ եկեղեցւոյն սպասաւոր։

—

9 Սեպտ. Նախավկայ վանքի վանահայր Վահան վարդապետ Գէորգեանը յայտարարութեամբ դիմելով Սինոդին խնդրում է արձակել իւրեան նոյն վանքի վանահայրութիւնից և նշանակել Ռուսաստանի վանքերից մէկում որևէ պաշտօնով, Սինոդը հրամայեց նորա յայտարարութիւնը թողնել առանց հետևանաց, տալով տեղեկութիւն Նախիջևանի հոգևոր կառավարութեան միջոցաւ։

—

9 սեպտ. Երևանի կոնսիստորիան դեկտ. 24, անցեալ 1890 տարուայ 5367 թ. յայտարարութեան հետ մատուցանելով Սինոդին Փառուխեցի Իլիաբէկ Սարգսեան Խաչատրեանցի ծննդական և հարկից ազատման վկայականը հարցաքննական թղթերով, խնդրում է ձեռնադրել քահանայ նոյն գիւղի վերայ, որ ունի 67 տուն և միևնոյն ժամանակ արդէն հարկից արձակուած է։ Որովհետև Իլիաբէկ Սարգսեանն չունի ուսումն, այդ պատճառաւ Սինոդը մերժելով ձեռնադրութեան խնդիրը՝ պատուիրեց Երեւանի կոնսիստորիային ընդունել նորան հոգևորականութեան մէջ և կարգել տեղւոյն եկեղեցու սպասաւոր։

—

9 սեպ. Տփխիսի կոնսիստորիան 1889 ամի 15 նոյեմբ. 4760 թ. յայտարարութեան հետ ներկայացնելով Ղազախի գաւառի Դիլիժան գիւղի հասարակական վճիռը, յայտնում է, թէ նոյն գիւղի հասարակութիւնն պարտական է եկեղեցուն և դպրոցին մի հազար ռուբլի

և դժուարանում է հասուցանել այդ գումարը, դրա փոխարէն կամենում է տալ հասարակական ամբարը իւր գետնով։ Որովհետև հասարակական ամբարը առանց առաստաղի մի խարխուլ շինութիւն է, և այդ գետնի վերայ արդէն մի քանի անձանց ձեռնարկութեամբ շինւում է օրիորդաց դպրոց, և եկեղեցուն և դպրոցին պարտական են վեց անձինք և ոչ հասարակութիւնը, ուստի պատուիրեց կոնսիստորիային պահանջել նոցանից իւրեանց ստացած պարտուց գումարը։